ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Ուսումնական գործընթացում սովորողների ստեղծագործականության խթանումը խմբային աշխատանքների և համապատասխան դիդակտիկ նյութերի կիրառության միջոցով »:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Կարեն Բաբայան

ԴՊՐՈՑ՝ Ակունքի միջնակարգ դպրոց

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____3

Գրական ակնարկ_____5

Փորձարարական հետազոտություն_____9

Խմբի նկարագիր_____11

Հետազոտության ընթացք_____11

Փորձարարական դաս 1_____13

Փորձարարական դաս 2_____13

Տվյալների մշակում և վերլուծություն_____15

Եզրակացություն_____19

Օգրագործված գրականության ցանկ_____20

Հավելված

Հայտորոշիչ

Դասապլան 1

Դասապլան 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակությունը կրեատիվ, ստեղծագործական միտք ունեցող անձանց կարիք ունի: Համապատասխանաբար, դպրոցի պահանջն է դաստիարակել այդ ստեղծագործականությունը, կրեատիվությունը, յուրօրինակությունն իր սաների մեջ: Հասարակության արագ զարգացումը, սրընթաց պրոգրեսը և շրջապատող իրականության արագ փոփոխությունները պահանջում են, որպեսզի մարդիկ կարողանան համապատասխան մոտեցում ցուցաբերել առկա փոփոխություններին՝ սեփական գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Այս պայմաններում շատ կարևոր է, որպեսզի հասարակության անդամները ցուցաբերեն մտքի ճկունություն և տարբերվող մտածելակերպ: Իսկ դրա հիմքը դրվում է արդեն դպրոցում:

Այս պայմաններում մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված աշակերտների մեջ սերմանել այնպիսի որակներ, ինչպիսիք են ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը: Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին՝ չվախենալով ուսման մեջ առկա դժվարություններից:

Որպեսզի աշակերտների մեջ ձևավորվեն այս բոլոր հատկանիշները, կարևոր է ուսուցչի դերը: Մանկավարժը պետք է կարողանա գտնել ուսուցման այնպիսի եղանակներ և կիրառի այնպիսի միջոցներ, որոնք թույլ կտան զարգացնել երեխաների մտածողությունը, ստեղծագործական միտքը, մտքի ճկունությունը և արագությունը, նոր լուծումներ փնտրելու և գտնելու կարողությունը:

Ստեղծագործող մարդկանց կարիք զգացվում է հասարակության, սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում: Եվ ակնհայտ է, որ այդ պահանջը գնալով աճելու է: Հենց Ստեղծագործող անձիք են ապահովում սոցիալական առաջընթացը, հասարակության զարգացումը:

Քանի որ հենց դպրոցն է այն կարևոր և առանցքային գործոններից մեկը, որը նպաստում է երեխաների ստեղծագործականության ձևավորմանը և զարգացմանը, ապա մանկավարժների առջև շատ կարևոր խնդիր է դրված այս ուղղությամբ:

Այս հետազոտական աշխատանքի շրջանակներում ես իմ առջև նպատակ եմ դրել ուսումնասիրել աշակերտների կրեատիվության, ստեղծագործականության խթանման գործընթացի առանձնահատկությունները դասերի ընթացքում: Այս նպատակի իրացման համար վեր են հանվել և առաջադրվել են հետևյալ կարևոր խնդիրներ.

- Ուսումնասիրել ստեղծագործականության խթանման հիմնական մանկավարժական միջոցները;
- Պարզել, թե ինչպես են ազդում ստեղծագործական խաղերը աշակերտների ստեղծագործականության խթանման վրա։
- Առանձնացնել այն խնդիրները և դժվարությունները, որոնք առաջանում են աշակերտների ստեղծագործականության խթանման գործում;
- Առաջարկել կրեատիվության խթանման ալգորիթմ՝ փորձարկելով այն դասի ժամանակ:

Այսպիսով, հավելենք, որ դպրոցում ստեղծագործականության խթանման առաջնային նպատակն է աշակերտի անձի և նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այս նպատակի իրացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ, կիրառելով տարբեր մանկավարժական միջոցներ, ուսուցման մեթոդներ և այլն:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

«Բոլոր մարդիկ գործունեության այս կամ այն ոլորտում ունակ են գրանցելու ստեղծագործական նվաճումներ՝ ճիշտ պայմանների, ինչպես նաև համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայության պարագայում»:

Քեն Ռոբինսոն

Հետազոտական համատեքստը կազմելիս առաջնորդվել ենք հայ և համաշխարհային ստեղծարարության հիմնահարցերը քննած մի շարք հեղինակների աշխատանքներով: Շնորհիվ այդ հեղինակների, «մասնակիորեն» հնարավոր եղավ ուսումնասիրել համաշխարհային փորձն ու մեթոդները, որոնք առկա են այս խնդրի շուրջ:

Եվ այսպես, հայ իրականության մեջ հայտնի մանկավարժ «Ստեղծարար մտածողություն» գրքի հեղինակ Վաչագան Սարգսյանը նշում է. «Մարդու մեջ զարգացնել ստեղծարար մտածողություն, նշանակում է նրան օժտել ստեղծագործելու որոշակի մեթոդիկայով, նրա մեջ ձևավորել ու զարգացնել երևույթները նորովի, անսովոր տեսանկյունից ներկայացնելու տեխնիկա, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, բազմազան հնարքներ բանեցնելու կարողություններ»:

Մի կողմից, կրեատիվությունը գործոն է, որը պատմության ընթացքում ենթարկվել է էվոլյուցիայի, բազմաթիվ փոփոխություններ է կրել: Մյուս կողմից, դա անձի անհատական պոտենցիալն է, որը նրան հնարավորություն է տալիս ոչ միայն լուծել հանդիպող խնդիրները և հաղթահարել դժվարությունները, այլև ակտիվ կերպով ազդեցություն գործել շրջապատող իրականության որոշ ասպեկտների վրա, փոփոխել դրանք, փոխել սեփական կյանքը և ապագան: Այսպիսին է կրեատիվության ընդհանուր մեկնաբանությունը:

Ստեղծագործականության, այսինքն անձի ոչ ստանդարտ, տարբերվող մտածողության խնդիրը մշտապես մեծ հետաքրքրություն է առաջացրել և գտնվել է տարբեր ոլորտների մասնագետների ուշադրության կենտրոնում: Հատկապես այսօր, երբ առկա գիտատեխնիկական առաջընթացը զգալի ազդեցություն է թողնում մարդկանց կյանքի վրա, շատ կարևոր է ոչ շաբլոնային, ոչ ստանդարտ մտածողություն և գործելաոճ ունեցող անձանց ներկայությունը:

Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ՝ սկսած ամենավաղ տարիքից:

Գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք վերածվեն լիարժեք կրեատիվության, դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել:

Այս խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կրեատիվության խնդիրը, և առհասարակ, կրեատիվության ֆենոմենը, տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից: Այսպես օրինակ, Ե. Տունիկը, ով զբաղվել է Է.Պ.Տորրենսի գիտական հայացքների խորին ուսումնասիրմամբ, ըստ վերջինիս հայեցակարգի մեկնաբանում է կրեատիվությունը, որպես անձի ընդունակություն, որը մշտապես գտնվում է զարգացման գործընթացում և կախված է բազմաթիվ ներքին և արտաքին պայմաններից, գործոններից [Туник Е. Е. Диагностика креативности. Тест П. Торренса: Методическое руководство. СПб., 1998, էջ 23]: Հեղինակն առանձնացնում է ստեղծագործականության հետևյալ չափանիշները.

- Մտքի սահունություն
- Մտքի ճկունություն
- Մտքի օրիգինալություն / յուրօրինակություն
- Մտքի մշակվածություն:

Վ. Շտերնը կարծում է, որ կրեատիվությունը – դա անձի հատկությունն է, որը նրան տրվում է ի ծնե [Штерн В. Умственная одарённость: Психологические методы испытания умственной одарённости в их применении к детям школьного возраста / В. Штерн ; пер. с нем. А. П. Болтунова ; под ред. В. А. Лукова. — СПб. : Союз, 1997, էջ 48]:

Ըստ Ա.Մատյուշկինի, կրետատիվությունը անձի՝ տաղանդով օժտված լինելու դրսևորումն է, որը կապված չէ առօրյա գործունեության հետ [Матюшкин, А. М. Загадки одарённости / А. М. Матюшкин. — М. : Школа-пресс, 1993, էջ 28]:

Այսպիսով, ստեղծագործականությունը սահմանվում է, որպես անձի ընդունակություն՝ ծնելու նոր գաղափարներ գործունեության այս կամ այն ոլորտում, որոնք կնպաստեն առաջադրված խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծմանը: Այս ընդունակությունը կարող է արտահայտվել անձի մտածողության, ընկալման, երևակայության, էմոցիաների, ինչպես նաև իր գործունեության արդյունքների մեջ:

Սակայն, ստեղծագործական գործընթացի կարգավորման զգացմունքային, էմոցիոնալ հիմքի առկայությունը դեռևս չի սպառում այս ֆենոմենի զարգացման մեխանիզմը երեխաների մոտ: Գոյություն ունեն նոր գաղափարների ստեղծման նաև այլ տեխնոլոգիաներ: Օրինակ, զարգացնող ուսումնառության հայեցակարգում ստեղծագործական գործընթացը կապվում է տեսական մտածողության հետ:

Դպրոցում աշակերտների կրեատիվության խթանման գործում կարևոր նախապայման է մանկավարժի ներազդեցությունը նրանց մտածողության գործընթացի վրա: Մտածողությունը սոցիալապես պայմանավորված, խոսքի հետ մշտապես փոխկապվածության մեջ գտնվող հոգեբանական գործընթաց է, որը հանգում է նորի բացահայտմանը, իրականության անմիջական կամ միջնորդավորված ընկալմանը և արտացոլմանը՝ դրա վերլուծության և համադրության ընթացքում [Психогимнастика в тренинге / Под ред. Н. Ю. Хрящевой. СПб., 2002, էջ 49]:

Այսպիսով, ստեղծագործականությունը – աշակերտի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության և անձի առանձնահատկությունների, մտածողության առանձնահատկությունների հետ:

Ստեղծագործական գործունեությունը նպաստում է դպրոցականների մոտ բարձրագույն հոգեբանական և հոգեկան ֆունկցիաների զարգացմանը, ինչպիսիք են հիշողությունը, մտածողությունը, ընկալումը, ուշադրությունը, ինչն իր հերթին ազդում է աշակերտի կողմից՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների յուրացմանը, որոնք նրանք ստանում են դասի ժամանակ:

Այս պարագայում շատ կարևոր խնդիր է աշակերտների մոտ հետաքրքրություն խթանել առաջադրված խնդրի, մատուցվող նյութի հանդեպ: Հետաքրքրության առկայությունը աշակերտի մոտ նպատակաուղղված կերպով տանում է նրան առաջադրված խնդիրների իրական իրագործմանը և լուծմանը՝ տարբեր եղանակներով: Ավելին, հետաքրքրությունը խնդրի հանդեպ զգալի կերպով ընդլայնում է աշակերտի աշխարհայացքը և կենսական փորձը, ծանոթացնում է նրան տարբեր տեսակի գործունեությունների հետ, ակտիվացնում և զարգացնում է նրա ընդունակությունները և հոգեբանական առանձնահատկությունները:

Ուսումնասիրելով գրականությունը, ծանոթանալով կրեատիվության բնույթի հետ, կարող ենք եզրակացնել, որ տվյալ գործընթացը անհրաժեշտ է և պետք է զարգացնել: Դպրոցում այս խնդրի իրացման համար պատասխանատվություն է կրում հենց

մանկավարժը, ով պետք է աշակերտներին ուղղեկցի դեպի ստեղծագործական գործունեության ակունքները, խթանի նրանց մոտ հետաքրքրությունը ուսուցանվող նյութի հանդեպ, առաջարկի ոչ ստանդարտ լուծումներ առաջադրված խնդիրների համար:

Ուսումնական գործընթացը՝ դա այն գործընթացն է, որն ուղղեկցվում է աշակերտների ինքնուրույն գործունեությամբ, որի ընթացքում ճանաչողության, վարժությունների և ձեռք բերված փորձի հիման վրա նրանց մոտ ձևավորվում են նոր գիտելիքներ, հմտություններ, գործելու և վարքի նոր ձևեր, կատարելագործվում են նախկինում յուրացված ձևերը:

Ժամանակակից դպրոցում աշակերտը ուսումնական գործընթացում հանդես է գալիս, որպես ուսումնառության սուբյեկտ, համագործակցում է ուսուցչի և համադասարանցիների հետ: Սա հենց այն անձնային կողմնոնոշված ուսումնառության ոճն է, որը հանդիսանում է կրեատիվության զարգացման բարենպաստ գործոն: Հենց այսպիսի միջավայրում մանկավարժը պետք է, առաջին հերթին, ձգտի բարենպաստ պայմաններ ստեղծել՝ աշակերտների ստեղծագործականության լիարժեք զարգացման համար, քանի որ ստեղծագործականությունը թույլ է տալիս աշակերտին հանդես գալ, որպես ուսման գործընթացի ակտիվ մասնակիցը, իրականացնել սեփական մտահաղացումները:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

«Բոլորն էլ տաղանդավոր են , քանի դեռ օձին չեն առաջարկում հեծանիվ վարի… »

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔ

Մարդու ստեղծագործական ներուժի արթնացումն արդյունավետ կրթության հիմքն է: Ստեղծարարություն բառը ծագել է լատիներեն creo –ստեղծել, արարել, ծնել բառից: Ստեղծարարությունը հատկապես բնութագրիչ է արվեստի մարդկանց համար, սակայն պարզվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրեն բնորոշ տաղանդներ, որոնք յուրաքանչյուրի մոտ յուրովի են արտահայտվում: Եվ ի լրումն այս մտքի մեջ բերենք աշխարհահռչակ գիտնական Էյնշտեյնի այն միտքը, որ « Մենք բոլորս հանճարներ ենք, բայց եթե Դուք պետք է ձկան մասին դատեք նրա՝ ծառ բարձրանալու կարողությամբ, ապա նա ողջ կյանքը կապրի՝ իրեն ամենավերջին անհաջողակը համարելով» : Հետևաբար ստեղծարարության կարողությունների բացահայտումն ու զարգացումը կհանգեցնի ցանկալի արդյունքների:

Կրթությունը նպատակ ունի ձևավորել ստեղծարար մարդ: Եվ այսպես, ով է ստեղծարար մարդը… Այս կերպարը հանդես է գալիս անսովոր ոճով, նա նոր մտքերի և ծրագրերի ծնունդտվող է: Հաղորդակցման առումով այս մարդիկ վարակում են իրենց բնույթով և իրենց եռանդով, նոր մտքեր են տալիս, ոգևորում են սկսելու նոր ծրագրեր: Ստեղծագործական կարողությունների բացահայտմանը միտված մի շարք մեթոդներ, մեթոդիկաներ և տեխնիկաներ են ստեղծվել, որոնք նպաստում են յուրօրինակ մտքերի համախմբմանն ու նոր մտքերի ստեղծման գործընթացին՝ օգնելով գտնել առաջացած խնդիրների և դժվարությունների համար նոր, յուրօրինակ մոտեցումներ և լուծներ: Ստեղծագործական գործունեության մեթոդիկաները օգնում են ավելի հստակ ձևակերպել խնդիրները, արագացնում են նոր գաղափարներ գտնելու
գործընթացը, ինչպես նաև ավելացնում են դրանց քանակը, լայնացնում են խնդիրների վերաբերյալ արդեն եղած տեսակետները և ոչնչացնում իմացական արգելքները:

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով:

Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների կրեատիվության, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների

ձևավորումն ու զարգացումը: Գիտելիքների գումարի յուրացումն ու մտապահումը, որոնք ավանդաբար համարվել են ուսուցման հիմնական նպատակ, այսօր վերածվել են ուսուցման հիմնական նպատակին հասնելու միջոցների:

ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Հետազոտությունս անցկացրել եմ Ակունքի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում: Դասարանում սովորում են 22 աշակերտ,որոնցից 5-ը աղջիկներ են,իսկ 17-ը՝ տղաներ: Ունենք և լավ և միջին մակարդակի սովորող աշակերտներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Այս հետազոտական աշխատանքի ընթացքում վեր են հանվել հետևյալ կարևոր խնդիրները և հարցերը, որոնք, ըստ իս, փոխադարձաբար կապակցված են աշակերտների ստեղծագործականության, կրեատիվության զարգացման հետ: Այդ խնդիրներն են.

- Երեխայի ստեղծագործական երևակայության զարգացում
- Բանավոր խոսքի զարգացում
- Ինքնարտահայտվելու կարողության զարգացում
- Ազատ և անկաշկանդ շփում հասակակիցների և մեծերի հետ
- Նախաձեռնելու, համախմբված աշխատելու հմտությունների ձեռքբերում
- Աշխատասիրության, պատասխանատվության, ուշադրության դրսևորում;
- Գեղագիտական ճաշակի զարգացում
- Տեսածի, լսածի վերաբերյալ խոսելու կարողություն
- Իրավիճակը շտկելու կարողություն
- Բարդույթներից ազատագրում:

Ենթադրվում է, որ ուսումնական գործընթացում աշակերտների ստեղծագործականությունը խթանելու հիմնական բաղադրիչ գործողություններն են.

- Խմբային աշխատանք
- Համագործակցություն
- Խնդիրների պլանավորում և բաշխում
- Համապատասխան նյութերի և դիդակտիկ միջոցների կիրառություն
- Ստեղծագործելու ազատություն
- Խրախուսում և գնահատում
- Սխալի, իրավունքի պահպանում
- Հարգանք ընկերոջ կարծիքի նկատմամբ:

Հետազոտությունը կատարվել է բնական պայմաններում, ուսումնասիրելով աշակերտների մեկ խումբ՝ այսինքն մեկ դասարան, որը հանդիսացել է այս հետազոտության

օբյեկտը:

Հիմնվելով հետազոտության նպատակի և խնդիրների վրա՝ առաջ քաշվեց հետևյալ հիպոթեզը. աշակերտների մոտ ստեղծագործականությունը կակտիվանա ուսումնական գործընթացի այնպիսի կազակերպման դեպքում, երբ դասարանում ստեղծվի «հաջողության» և համագործակցության մթնոլորտ, գործադրվեն հետաքրքրաշարժ միջոցներ և դիդակտիկ նյութեր՝ նյութի մատուցման և ուսուցանման համար:

Հետազոտական դասերի շրջանակներում՝ իմ կողմից իրականացրել եմ ներգրավված դիտարկում՝ հանդիսանալով դասապրոցեսի անմիջական մասնակիցը և ուղղորդող անձը:

Տվյալների հավաքագրման համար կիրառել եմ համապատասխան հարցաթերթիկներ՝ աշակերտների համար:

Աշակերտների ստեղծագործականության ցուցանիշները ամփոփելու և գնահատելու համար՝ աշակերտներին առաջարկվել է լրացնել հայտորոշիչ թեստ, և առաջադրանքից ելնելով գանահատել եմ աշակերտների ստեղծագործականությունը:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

Առաջին դասի ընթացքում աշակրտները ուսուցանվող թեման ուսումնասիրել են համապատասխան պաստառների և քարտերի միջոցով, սովորել են քաղաքների, գործող դերակատարների անվանումներ, ինչպես նաև զարգացրել են այդ անունները մտապահելու,գնահատելու հմտությունը: Բացի ուսումնական նյութի յուրացման անհրաժեշտությունից, դասի ընթացքում նպատակ էի դրել նաև առավելագույնս աշխատել աշակերտների համագործակցային և հաղորդակցական հմտությունների զարգացման ուղղությամբ, նպաստել հետաքրքիր քննարկումների կազակերպմանը դասարանում՝ աշակերտների մոտ խթանելով սեփական, ինքնուրույն մտահաղացումների և գաղափարների արտահայտման կարողությունը: Այս առումով շատ կարևոր խթան է հանդիսացել իմ կողմից խմբային աշխատանքների կազմակերպումը, որտեղ յուրաքանչյուր աշակերտ պետք է կարողանար լսել դիմացինի մտքերը, հասկանալ դրանք և շարունակել ըստ իր մտահաղացման:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Երկրորդ հետազոտական դասի նպատակն էր զարգացնել աշակերտների՝ քննարկումներ վարելու կարողությունը , ինչպես նաև հմտանալ թեմայի շուրջ ոչ միայն տեսական, այլև գործնական առումով՝ կատարելով համապատասխան վարժությունները, գործնական, պատմողական առաջադրանքեր: Հանպատրաստից աշակրտներին առաջարկելով որոշակի հանձնարարություններ և առաջադրանքներ՝ ես նպատակ էի հետապնդում քննարկումներ կազմակերպել ուսումնասիրվող թեմայի շուրջ, ընդ որում այնպես, որպեսզի աշակերտները կարողանան ազատ արտահայտվել և շփվել միմյանց հետ այդ թեմայի շրջանակներում: Հենց այսպիսի աշխատանքի արդյունքում է առավելագույնս արտահայտվում և դրսևորվում աշակերտների ոչ միայն ակտիվությունը և ազատ շփվելու կարողությունը, այլև նրանց ստեղծարարությունը և ստեղծագործական մտքի թռիչքը:

Դրան են նպաստում նաև սահիկաշարի դիտումը համակարգչի կիրառմամբ, համապատասխան դիդակտիկ նյութերի կիրառությունը և դրանցով հանձնարարված առաջադրանքները: Սկզբում հանձնարարվեց կարդալ նոր թեման և լրացնել աղյուսակը <<Փոխներգործուն գրառումների համակարգ>>մեթոդով,որի համար տրվեց ժամանակ:Ապա կազմեցին զույգեր և միավորեցին իրենց ստացած գիտելիքները,որից հետո ներկայացրին իրենց գրառումները: Վերջում <<Կիսատ նախադասություններ >>մեթոդով ամփոփեցինք

դասը:

Ընդհանուր առմամբ, երկրորդ հետազոտական դասն ընթացավ համապատասխան նախօրոք կազմված դասապլանի, սակայն աշակերտների ակտիվությունը զգալիորեն ավելի բարձր էր: Համապատասխանաբար, որոշակի թվով աշակերտներ բավականին մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում<<Կիսատ նախադասություններ >> լրացման, դրա ամփոփման և ներկայացման, ինչպես նաև հետագա առաջադրանքների կատարման ընթացքում: Բավականին հետաքրքիր և աշխույժ դաս ստացվեց արդյունքում, ինչի հիման վրա կարելի է փաստել, որ երկրորդ դասին կիրառված միջոցները, առաջադրանքները, մեթոդները նպաստեցին զգալի շարժի և առաջընթացի: Աշակերտները առավել ինքնուրույն և ինքնավստահ էին, կարողանում էին վարժ կատարել առաջադրանքները այն պայմաններում, երբ նրանք նոր էին ծանոթանում այդ առաջադրանքներին և չէին պատրաստվել դրանց: Դասապրոցեսը հետաքրքիր և բովանդակալից դարձավ նաև խմբային աշխատանքի արդյունքում, որտեղ յուրաքանչյուր աշակերտ փորձում էր անել առավելագույնս իր հնարավորությունների սահմաններում՝ լավ արդյունքի հասնելու համար: Աշակերտները ցուցաբերեցին բավականին ակտիվ աշխատանք, ստեղծագործական մոտեցում՝ առաջադրանքների կատարման ժամանակ:

Դասի ավարտին գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու և ամփոփելու համար աշակերտները լրացրեցին հայտորոշիչ թեստ, ինչպես նաև աշակերտների համար նախատեսված հարցաթերթիկ՝ դասի մասին իրենց տպավորությունները և կարծիքն արտահայտելու համար:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դասի ընթացքում 22 աշակերտներից 12-ը ցուցաբերում էին բարձր ակտիվություն, մասնակցություն դասին, ձգտում էին արտահայտել իրենց կարծիքը ուսուցչի կողմից առաջադրված հարցերի և քննարկումների շրջանակներում, արտահայտում էին բավականին բարձր հետազքրքրվածություն դասի ընթացքում:
Աշակերտներից 5-ը նույնպես բավականին հետաքրքված էին, սակայն չափազանց պասիվ, չէին մասնակցում դասին առանց իմ /ուսուցչի/ հորդորի և ուղղակի հարցադրումների: Սակայն, երբ ես հարցերով դիմում էի նրանց, նրանք բավականին արագ արձագանքում էին և փորձում արտահայտել իրենց մտքերը:

Մնացած 5 աշակերտները չափազանց պասիվ էին, նրանց մոտ բացակայում էր որևէ հետաքրքրությունը դասի նկատմամբ, առավել ևս նրանք չէին կարողանում ինքնուրույնություն ցուցաբերել՝ իմ/ուսուցչի/ կողմից ուղղված հարցերին պատասխանելիս

Գրաֆիկորեն արտահայտենք ներկայացված պատկերը.



Ամփոփելով առաջին հետազոտական դասի արդյունքները, պետք է նշենք, որ դասարանի աշակերտների ընդհանուր առմամբ հետաքրքրված էին դասով, սակայն դժվարանում էին սեփական մտքերի արտահայտման գործում, բավականին մեծ

դժվարությունների էին հանդիպում նաև այն ժամանակ, երբ պետք է որևէ միտք արտահայտեին քննարկման կամ խմբային աշխատանքի ժամանակ: Որոշակի ակտիվություն և աշխուժություն նկատվեց դասի ավարտական փուլում, երբ երեխաները աշխատում էին գունավոր քարտերով, ինչպես նաև պետք է շարունակեին մեկը մյուսի միտքը կամ նախադասությունը՝ կիրառելով նոր բառապաշարը:

Տնային հանձնարարությունը, մասնավորապես լրացուցիչ նյութի ուսումնասիրումը առաջարկված թեմայով, նպատակ ուներ խթանելու աշակերտների մոտ սեփական մտքերի շարադրման կարողության զարգացումը, ինչպես նաև ստեղծագործական մոտեցման արտահայտմանը: Հանձնարարված էր նաև ներկայացնել լրացուցիչ նյութի

բովանդակությունը, ինչը ևս կխթաներ թե ստեղծագործական մոտեցումը, և թե բանավոր խոսքը, նոր պատմական բառապաշարի կիրառությունը նախադասություններում:

Ընդհանուր առմամբ, կարող ենք արձանագրել, որ երկրորդ դասին մասնակցաց 22 աշակերտներից 15-ը բավականին ակտիվ էին դասի ողջ ընթացքում և պարբերաբար արտահայտում էին իրենց մտքերը և կարծիքները՝ առաջարկվող հարցադրումների շուրջ, առաջադրանքների կատարման ժամանակ շատ ինքնավստահ և կայուն գիտելիքներ ցուցաբերեցին: 5 աշակրտներ նունպես զգալիորեն ակտիվ էին մասնակցում դասապրոցեսին, սակայն աչքի չէին ընկնում բավականաչափ վստահ պատասխաններով, ժամանակ առ ժամանակ էին մասնակցում դասին սեփական նախաձեռնությամբ, այլ ոչ թե ուսուցչի անմիջական հարցադրումների շնորհիվ: Սակայն, խմբային աշխատանքի ընթացքում նրանք ցուցաբերեցին բարձր ոգևորություն և ակտիվ աշխատանք՝ ելնելով սեփական խմբի հանդեպ պատասխանատվության զգացումից:

Մյուսները նորից բավականին պասիվ էին, փոքր ինչ աշխուժացան հարցադրումների և խմբային աշխատանքի ընթացքում, սակայն ընդհանուր պատկերի փոփոխություն չարձանագրվեց: Այս աշակերտները չէին կարողանում արտահայտել սեփական կարծիքը և վստահ կատարել առաջադրանքը՝ հիմնվելով սեփական ստեղծագործական հմտությունների և կարողությունների վրա:

Ներկայացնենք երկրորդ հետազոտական դասի արդյունքները՝ առաջին դասի արդյունքների հետ համեմատության համատեքստում.



Այսպիսով, ամփոփելով երկու դասերի արդյունքները, պետք է նկատել, որ աշակերտների մոտ գրանցվեց որոշակի աճ կրեատիվության և ստեղծագործականության ցուցանիշներում: Մասնավորապես, ակտիվ և կրեատիվ աշակերտների շարքերը համալրվեցին մի քանի նոր աշակերտներով, ովքեր բավականաչափ հետաքրքրվեցին անցկացված դասերի ձևաչափով և մեծ վստահությամբ և ինքնուրույնությամբ հանդես եկան նաև երկրորդ հետազոտական դասի ընթացքում: Բավականաչափ ակտիվացան և որոշ առումով փորձեցին ստեղծագործաբար մոտենալ դասին նաև այն աշակերտներից մի քանիսը, ովքեր առաջին դասին որևէ հետաքրքրվածություն կամ մասնակցություն չունեցան:

Ենթադրում եմ, որ աշակերտերի մոտ ձևավորելով որոշակի առումով «ազատ տարածք»՝ սեփական մտքերը և կարծիքները արտահայտելու, բաց քննարկումներին մասնակցելու, ինչպես նաև դրանք ինքնուրույն խթանելու և կազմակերպելու համար, աշակերտները կարողացան բավականաչափ ինքնահաստատվել, ավելի վստահ և ինքնուրույն զգալ դասի ժամանակ և տնային հանձնարարություն կատարելիս: Շատ կարևոր գործոն էր նաև ուսուցչի՝ խրախուսելու և աշակերտին սխալվելու իրավունք վերապահելու մարտավարությունը, որը նա կիրառեց հետազոտական դասերի ընթացքում:

Իսկ այս գործոնները ինքնստինքյան բերում են անձի մոտ ստեղծագործական մտքի խթանմանը, առավել ազատ և անկաշկանդ ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

Հարկ է նշել, որ այս թեմայով հետազոտությունը կարող էր, հատկացված ժամաքանակի պարագայում, հնարավոր չլիներ ցուցաբերել արդյունքների չափելիություն, այնուամենայնիվ չխորշեսինք և կատարեցինք այս հաճելի գործընթացը:

Իբրև թիրախային խումբ մեր կողմից ընտրվել էր 7-րդ դասարանը, քանի որ այս տարիքի երեխաները առավել բաց և անկաշկանդ են ստեղծարար մտքի հանդեպ, և , անպարկեշտ չինչի, կրթության կաղապարի մեջ դեռ չեն հասցրել ոսկրանան նրանց մտքերը: Հրաշալի տարիք է ստեղծարար հմտությունների ձևավորման համար: Բացի այս հայեցակետից խնդիր էինք դրել նաև ստեղծարարության զարգացումը խթանող մեթոդների , հնարների , վարժությունների միջոցով ապահովել , ոչ միայն դասարանի բոլոր 22 աշակերտների ակտիվ մասնակցությունը, այլ յուրաքանչյուրի մոտ բացահայտել ստեղծարար կարողություններ: Իդեպ դասընթացի ժամանակ կիրառված վարժությունների, փոքրիկ գրավոր շարադրանքի, ամփոփման ժամանակ իմ և աշակերտնեիր կողմից ստեղծած աղյուսակի միջոցով, մեզ հաջողվեց ստուգելի դարձնել երեխաների ստեղծարար կարողությունների բացահայտումը:

Կատարված աշխատանքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, դասարանի 75 տոկոսը `15 աշակերտ, կարողանում են ձևակերպել հարցեր և պատասխանել տարբեր բարդությունների:

Հանձնարարված փոքրիկ շարադրանքի տեսքով գիտելիքների ստուգման ժամանակ , ճիշտ է երեխաները հիմնականում տուրք էին տվել իրենց երևակայությանը, բայց նաև նույն համատեքստից մենք քաղեցինք կայուն իմացությունների արդյունքներ, ինչը մինչև12 երեխայի դեպքում ակնառու երևում էր: Մյուսների դեպքում նույնպես պատկերը կար , բայց, ոչ նույնքան հստակ:

Մեր աշխատանքի արդյունավետությունը էլ ավելի ակնառու դարձրեց ամփոփման ժամանակ կիրառված , իր բնույթով հայտորոշիչ թեստ հիշեցնող , իմ և աշակերտների կողմից ձևավորած աղյուսակը, որի արդյունքները չափորոշիչահեն էին : Այս ամփոփիչ ուսումնասրիրությանը մասնակցեց 20աշակերտ ` դասարանի 86 տոկոսը: Չի մասնակցել 2 երեխա՝ 14 տոկոս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կրեատիվությունը հիմնված է երևակայության, ինտելեկտի, գյուտարարության և ինքնակրթության վրա: Կարելի է առանձնացնել կրեատիվության 3 հիմնական բաղադրիչներ.

1) Իրազեկություն՝ գիտելիք, հմտություն, փորձ;

2) Ստեղծարար մտածողություն՝ ճկունություն, համառություն որոշում կայացնելիս, կրեատիվ մտածողության մեթոդների կիրառում;

3) Մոտիվացիա՝ ներքին՝ սեփական հետաքրքրքվածությունը խնդրի լուծման ժամանակ, ինքնակատարելագործման ձգտում և գիտելիքների կիրառում, և արտաքին մոտիվացիա՝ նյութական խրախուսում և առաջխաղացում:

Կրեատիվության համար վտանգավոր է հին մեթոդների կիրառումը, որը թույլ չի տալիս նոր գաղափարի և դրա իրականացման համար կրեատիվության դրսևորմանը: Կրեատիվությունը, ինչպես յուրաքանչյուր ընդունակություն, անընդհատ զարգացման կարիք ունի: Կան մի շարք գործողություններ, որոնց իրականացման դեպքում բարձրանում է աշակերտների՝ կրեատիվ աշխատելու ցանկությունը՝

- Հոգեբանական հատկանիշների վերլուծություն;
- Մտքերի վերարտադրության մեթոդների ուսուցանում;
- Խմբում աշխատելու կանոնների ուսուցում և դերերի բաշխում.

Աշակերտների կրեատիվության բարձրացման կարևոր միջոց է մոտիվացիայի բարձրացումը:

Այսպիսով, դպրոցում սովորող աշակերտների կրեատիվությունը խթանում է մանկավարժական հաջող գործունեությունը, որն իրականացվում է համապատասխան մեթոդների, միջոցների օգնությամբ, կիրառելով նորագույն տեխնոլոգիական միջոցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Белоусова А.К., Вышквыркина М.А. Социальный интеллект // Психология общения. М.: 2015
2. Лейтес Н. С. Способности и одаренность в детские годы. М., 1984
3. Матюшкин, А. М. Загадки одарённости / А. М. Матюшкин. — М. : Школа-пресс, 1993
4. Психогимнастика в тренинге / Под ред. Н. Ю. Хрящевой. СПб., 2002
5. Туник Е. Е. Диагностика креативности. Тест П. Торренса: Методическое руководство. СПб., 1998
6. Штерн В. Умственная одарённость: Психологические методы испытания умственной одарённости в их применении к детям школьного возраста / В. Штерн ; пер. с нем. А. П. Болтунова ; под ред. В. А. Лукова. — СПб. : Союз, 1997

Դասապլան /1/

Ուսուցիչ՝ Կարեն Բաբայան

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ VII-րդ

ԹԵՄԱ՝	Դաս 12. Հայաստանը VII դարում
Օգտագործվող նյութեր՝	- Դասագիրք , աշխատանքային տետրեր, քարտեզ , Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս),նկարներ (պաստառներ), արխիվային փաստաթղթեր, էլեկտրոնային գրատախտակ (ՏՀՏ),
Հիմնական հասկացություններ	Կոմիտաս կաթողիկոս, Դավիթ Սահառունի, Թեոդորոս Ռշտունի, Հայոց իշխան, Արաբական խալիֆայություն, Մուավիա
Դասի նպատակը	* Նպաստել՝ VI - VII դարերի հայոց պատմության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, * Հայաստանի ինքնավարության վերականգնման հետ կապված հիմնական փաստերը, իրադարձությունները բացատրելու,համեմատելու, տարանջատելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքներ	Սովորողը կկարողանա՝ 1. Ներկայացնել և բացատրել VI - VII դարերում Հայաստանում Բյուզանդիայի վարած քաղաքականության և հակաբյուզանդական ելույթների ու ապստամբությունների հետ կապված կարևոր փաստերը, դեպի Հայաստան արաբական արշավանքների ժամանակը, 652 թ. հայ–արաբական պայմանագրի կնքման վայրը, կնքող անձանց, Հայաստանի ինքնավարության վերականգնման հետ կապված հիմնական փաստերը: 2. Թվարկել հայ-արաբական պայմանագրի կետերը: 3. Վերլուծել պայմանագիրը ,Թ. Ռշտունու վարած քաղաքականությունը: 4. Համեմատել Մամիկոնյան և Բագրատունի իշխանական տոհմերի դիրքորոշումն ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ:

Գործողություններ (Ժամ /տևողություն/) Տևողությունը-45 րոպե	Պլանավորած ՈւԳ ռազմավարություններ * Մտագրոհի միջոցով /բլից հարցեր/ * Գծակարգերի օգտագործում/ Տ -աձև աղ./ * էլեկտրոնային գրատախտակ(ՏՀՏ) * աղբյուրների ուսումնասիրում * նկարների դիտում և քննարկում * ապագայի անիվ	Առանցքային հարցեր (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)

Մտքերի քարտեզագրում՝ մտագրոհի միջոցով՝ 5 րոպե	Ուսուցիչը հիշեցնում է դասի թեման և կազմակերպելով մտագրոհ ,կարճ հարցերի միջոցով վեր հանում նախորդ թեմայի կարևոր գաղափարները ,հատկապես պարսկա-բյուզանդական հարաբերությունները և 591թ. Հայաստանի	1. Ե՞րբ է Հայաստանը II անգամ բաժանվել Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև։ 2. Ինչու՞ վերսկսվեց պարսկա-բյուզանդական պատերազմը։

Իմաստի ընկալում 15-20 րոպե	II բաժանումը։ Ուսուցիչը համառոտ ներկայացնում է ,որ Պարսկա-բյուզանդական պատերազմը վերսկսվեց, քանի որ 614 թ. պարսիկները գրավեցին Երուսաղեմը և որպես ավար տարան Խաչափայտը: Պատրեզամն ավարտվեց Պարսկաստանի պարտությամբ, Խաչափայտը վերադարձվեց Երուսաղեմ ։ Շարունակելով դասը ուսուցիչը, բացատրում և հանձնարարում է զույգերով դասագրքից դուրս բերել և լրացնել արաբական արշավանքները / Տ -աձև աղ./։ Ուսուցիչը քարտեզի վրա ցույց է տալիս արաբների կողմից գրված տարածքները։	3. Ե՞րբ են տեղի ունեցել արաբների առաջին արշավանքները Հայաստան։ 4. Ու՞մ գլխավորությամբ պայքար սկսվեց արաբների դեմ։ Աշակերտները լրացնում են Տ -աձև աղ-ը , հետևում ատլասներին։
Կշռադատում /Վերջնարդյուք/ 10 րոպե	Գրատախտակին ուսուցիչը գծում է ապագայի անիվ և աշակերտների միջոցով լրացնում հայ-արաբական պայմանագրի կետերը և դրանց հետևանիքները։ ԿԱՊԿՈՒ սովորողներին հանձնարարվում է դասից դուրս բերել հատուկ անունները /հնարավորության դեպքում բացատրել/։ Դասի վերջնարդյունքը ստուգելու համար աշակերտները լրացնում են հայտորոշիչ թեստ։	1. Ե՞րբ է կնքվել հայ-արաբական պայմանագիրը։ 2.Ինչպե՞ս էր Թեոդորոս Ռշտունին փորձում պաշտպանել Հայաստանը արաբական հարձակումներից։ 3. Որքանո՞վ էր արդարացված Թ. Ռշտունու վարած քաղաքականությունը։
Գնահատում 5 րոպե /Միավորային/ /Ձևավորող/	Դասի վերջում ըստ չափորոշչային պահանջների կատարվում է միվորային գնահատում։ Լավագույն ,ճիշտ, մաքուր աշխատանքներ կատարողները արժանանում են խրախուսող ,ձևավորդ գնահատումների։	Աշակերտները կարողանում են շարադրել իրենց մտքերը՝ հիմնավորելով պատասխանները. /բանավոր խոսքի զարգացում/։ Աշակերտները սկսում են ոգևորվել և ավելի լավ աշխատել։
Տնային աշխատանք	Սովորել դասը,շարունակել լրացնել աղյուսակը,գրավոր պատասխանել դասագրքի քննարկման հարցին։	Ովքեր չհասցրեցին ավարտել աշխատանքը ,շարունակում են տանը։

Դասապլան /2 /

Ուսուցիչ՝ Կարեն Բաբայան

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ VII

ԹԵՄԱ՝	§14. Հայաստանի ինքնավարության վերականգնումը
Օգտագործվող նյութեր՝	- Դասագիրք , աշխատանքային տետրեր, քարտեզ , Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս),նկարներ (պաստառներ), արխիվային փաստաթղթեր, էլեկտրոնային գրատախտակ (ՏՀՏ), Բագրատույաց Հայաստան.ppt
Հիմնական հասկացություններ	Աշոտ Մսակեր, Բագարան, Բագարատ Բագրատունի, «Սասնա ծռեր » էպոս, «Արյան լճի » ճակատամարտ , Քթիշ ամրոց
Դասի նպատակը	* Հայաստանի ինքնավարության վերականգնման հետ կապված հիմնական փաստերը, իրադարձությունները բացատրելու, համեմատելու, տարանջատելու, գնահատելու կարողությունների զարգացմանը: * Կարևորել Բագրատունիների իշխանական տան դերը երկրի ինքնավարության և անկախության գործընթացում: * Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ամրապնդում: Հարցերի, քննարկումների միջոցով՝ բոլորի համար ակտիվության ապահովում: Պատկերավոր նյութերի ներկայացմամբ հետաքրքրության խթանում:
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքներ	Սովորողը կկարողանա՝ * Նկարագրել Աշոտ Բագրատունու ձեռնարկած քայլերը ՝ անկախության վերականգնման գործում: * Համեմատել Մամիկոնյան և Բագրատունի իշխանական տոհմերի դիրքորոշումն ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ: /Բագրատունիները կողմ էին արաբների հետ բանակցություններին, Մամիկոնյանները՝ պայքարի շարունակմանը:/ * Վերլուծել Հայաստանի անկախության ներքին և արտաքին նախադրյալները:

Գործողություններ (Ժամ /տևողություն/) Տևողությունը-45 րոպե	Պլանավորած ՈւԳ ռազմավարություններ * Մտագրոհի միջոցով /բլից հարցեր/ * Գծակարգերի օգտագործում/ Т -աձև աղ./ * էլեկտրոնային գրատախտակ(ՏՀՏ) * աղբյուրների ուսումնասիրում * նկարների դիտում և քննարկում * ապագայի անիվ ,* Շրջվիր դեպի զույգդ	Առանցքային հարցեր (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)

Մտքերի քարտեզագրում՝ մտագրոհի միջոցով՝ 5 րոպե	Համառոտ ներկայացնել Արաբական խալիֆայության ստեղծման Հայաստանի նվաճման ,ազատագրական պայքարի և ծանր կացության մասին։ Գրատախտակին գրել «Բագրատունյաց թագ.-ն հաստատման ընթացքը» ենթակետը։	1. 9-րդ դ. առաջին կեսին ո՞ր իշխանական տները հզորացան։ 2.Այդ ժամանակաշրջանի Բագրատունիների տոհմի ի՞նչ նշանավոր ներկայացուցիչներ

Իմաստի ընկալում 15-20 րոպե	Ուսուցիչը բացատրում և հանձնարարում է զույգերով դասագրքից դուրս բերել և լրացնել Բագրատունյաց թագավորության հաստատման ներքին և արտաքին նախադրյալները / Т -աձև աղ./։ Ուսուցիչը քարտեզի վրա ցույց է տալիս թագավորության սահմանները , նշանավոր քաղաքները / Բագարանը,Դվինը,Կարսը /։	գիտեք։ 3. Ո՞ր թվականին Աշոտը դարձավ Հայոց իշխան և ի՞նչ մականուն էր նա կրում։ 4. Հակաարաբական ապստամբությունը ո՞ր ստեղծագործության մեջ է արտացոլվել։ Աշակերտները լրացնում են Т -աձև աղ-ը , ստուգում իրենց գրառումները։ Հետևում են ատլասներին։
Կշռադատում /Վերջնարդյուք/ 10 րոպե	Գրատախտակին ուսուցիչը գծում է ապագայի անիվ և աշակերտների միջոցով լրացնում , վերլուծում ,հետևություններ են անում հետևանքների մասին։ ԿԱՊԿՈՒ սովորողներին հանձնարարվում է դասից դուրս բերել հատուկ անունները /հնարավորության դեպքում բացատրել/։ Դասի վերջնարդյունքը ստուգելու համար աշակերտները լրացնում են հայտորոշիչ թեստ։	1.9-րդ դարում՝ խալիֆայության թուլացման պայմաններում կրկին հզորացան Բագրատունիները, Արծրունիները, Սյունիները, որոնցից առավել ազդեցիկ դիրքի հասան Բագրատունիրները։ 2.Աշոտ Բագրատունին 804 թ. պաշտոնապես ճանաչվեց Հայոց իշխան, նա հայտնի է «մսակեր» մականվամբ։ 3.Աշոտ Բագրատունին ճանաչվեց Հայոց իշխան և սպարապետ։ 4.Հակաարաբական ապստամբությունը արտացոլված է «Սասնա ծռեր» էպոսի մեջ։
Գնահատում 5 րոպե /Միավորային/ /Ձևավորող/	Դասի վերջում ըստ չափորոշչային պահանջների կատարվում է միվորային գնահատում։ Լավագույն ,ճիշտ, մաքուր աշխատանքներ կատարողները արժանանում են նաև խրախուսող ,ձևավորող գնահատումների։	Աշակերտները կարողանում են շարադրել իրենց մտքերը՝ հիմնավորելով պատասխանները. /բանավոր խոսքի զարգացում/։ Աշակերտները սկսում են ոգևորվել և ավելի լավ աշխատել։
Տնային աշխատանք	Սովորել դասը,շարունակել լրացնել աղյուսակը,գրավոր պատասխանել դասագրքի քննարկման հարցին։	Ովքեր չհասցրեցին ավարտել աշխատանքը ,շարունակում են տանը։

Հայտորոշիչ

հարցեր /դաս 1/

1. Ինչու՞ վերսկսվեց պարսկա-բյուզանդական պատերազմը:
2. Ե՞րբ են տեղի ունեցել արաբների առաջին արշավանքները Հայաստան:
3. Ում գլխավորությամբ պայքար սկսվեց արաբների դեմ:
4. Ե՞րբ է կնքվել հայ-արաբական պայմանագիրը:
5. Ինչ գիտեք հայ-արաբական պայմանագրի բովանդակության մասին:
6. Ե՞րբ և ի՞նչ վարչաքաղաքական միավոր ստեղծվեց Արաբների կողմից նվաճված տարածքներում:
7. Ովքե՞ր էին Հայոց իշխանի և սպարապետի պաշտոնը զբաղեցնող նախարարական տան ներկայացուցիչները:
8. Ի՞նչ քաղաքականություն էին վարում արաբները հայերի նկատմամբ

Հայտորոշիչ հարցեր /դաս 2/

1. Ինչպե՞ս էր պայքարում հայ ժողովուրդը արաբական տիրապետության դեմ:

2. Ի՞նչ նախադրյալներ էին ստեղծվել Հայաստանի ինքնավարության վերականգնման համար:

3. 9-րդ դ. առաջին կեսին ո՞ր իշխանական տները հզորացան:

4. Այդ ժամանակաշրջանի Բագրատունիների տոհմի ի՞նչ նշանավոր ներկայացուցիչներ գիտեք:

5. Ո՞ր թվականին Աշոտը դարձավ Հայոց իշխան և ի՞նչ մականուն էր նա կրում:

6. Հակաարաբական ապստամբությունը ո՞ր ստեղծագործության մեջ է արտացոլվել: